

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅԱՆ
ՕԲՅԵԿՏԻՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

Եղիազարյան Ա. Ա., Մուրադյան Վ. Ս.

ԵՂՀ, Երևան, Հայաստան, armenuhieghiazaryan@gmail.com

Լանդշաֆտի գեղագիտությունը ուսումնասիրում է բնական և անթրոպոգեն լանդշաֆտների գեղեցկությունը, գրավչությունը, ինչպես նաև գեղագիտական ընկալման և գնահատման առանձնահատկությունները (Николаев В.А, 2005): Լանդշաֆտը, իր վրա կրելով հասարակության կողմից որոշակի ճնշում, միաժամանակ ունի գեղագիտական պոտենցիալ և ակտիվ կերպով ազդում է մարդու էմոցիոնալ հոգեբանական կոմֆորտայնության վրա: Տարածքի վրա ներկայիս անթրոպոգեն ազդեցության պայմաններում լանդշաֆտի գեղեցկության, գրավչության ու հատկապես կուսության պահպանումը նպաստում է բարոյապես առողջ հասարակության ձևավորմանը: Գեղեցկության և ներդաշնակության հարցերը մարդկանց միշտ հետաքրքրել են, ինչն էլ որոշում է մեզ շրջապատող միջավայրի և նրա լանդշաֆտների գեղագիտական հնարավորությունների ուսումնասիրման բարձր հետաքրքրությունը: Բացի այդ, լանդշաֆտի գեղագիտական հատկության գնահատման հիման վրա կարելի է ոչ միայն պատճառաբանել բնության տարբեր օբյեկտների պահպանության անհրաժեշտությունը, բացահայտել տարածքային միավորները, որոնք մարդկանց ներդաշնակ և հարմարավետ գործունեության հնարավորություն են տալիս, այլ նաև իրականացնել տնտեսական և ռեկրեացիոն ռացիոնալ գործունեություն: (Мотошина А., Вдовюк Л., 2013)

Աշխատանքի նպատակն է գնահատել և քարտեզագրել Սյունիքի մարզի լանդշաֆտների գեղագիտական գրավչության աստիճանը ԱՏՀ-ի (աշխարհագրական տեղեկատվական համակարգեր) միջոցով:

Հաշվի առնելով Սյունիքի մարզի բնական պայմանների առանձնահատկությունները, Դ. Դիրինի (Дирин Д., Попов Е, 2010), և Վ.Էրինգիսի, Ա. Բուդրյունասի (Эрингис К., Бударюнас А, 1975) և Ռենե Ֆորիի (Rene Fourie, 2005) աշխատանքներում օգտագործված օբյեկտիվ գնահատման մեթոդիկաները, ինչպես նաև գեղագիտության մեջ ընդունված ներդաշնակության կանոնները, մեր կողմից առանձնացվել և դասակարգվել են լանդշաֆտի գեղագիտական հատկության օբյեկտիվ գնահատման գործոնները, ինչպես նաև տրվել է դրանց գնահատման սանդղակը (աղ. 1):

Գնահատումը կատարվել է 0-5 բալային սանդղակով: Բալային գնահատումից բացի իրականացվել է նաև արժեքային գնահատում՝ փորձագիտական կշռային գործակիցների ընտրության միջոցով: Մասնավոր գնահատականների ինտեգրացման արդյունքում ստացվել է լանդշաֆտի գեղագիտական գրավչության աստիճանը (ԼԳԳԱ) որոշող հետևյալ բանաձևը՝

$$LGGU = V_1 * (F_1) + V_2 * (F_2) + \dots + V_n * (F_n)$$

որտեղ $F_1 \dots F_n$ - դիտարկվող գործոններն են բալերով, n-ը գործոնների թիվը, $V_1 \dots V_n$ - համապատասխան կշռային գործակիցները:

Աղյուսակ 1

Լեռնային լանդշաֆտների գեղագիտական գնահատման գործոնները և սանդղակը

| Գնահատման գործոնները | | Բալ | Կշռային գործակից | |
|----------------------|--|---------------|------------------|-------|
| Ռելիեֆ | Բացարձակ բարձրություն | Մինչև 600մ | 1 | 0.02 |
| | | 600-1400մ | 2 | |
| | | 1400-2200մ | 3 | |
| | | 2200-3000մ | 4 | |
| | | 3200մ և ավելի | 5 | |
| | Հորիզոնական մասատվածություն և (հեռավորությունը գետային և ձորակային ցանցից) | Մինչև 200մ | 2 | 0.025 |
| | | 200-600մ | 5 | |
| | | 600-1000մ | 4 | |
| | | 1000-2000մ | 3 | |
| | | 2000 և ավելի | 1 | |
| | Ողղաձիգ մասնատվածություն և | մինչև 400մ | 1 | 0.025 |
| | | 400-600մ | 2 | |
| | | 600-800մ | 3 | |
| | | 800-1000մ | 4 | |
| | | 1000մ և ավելի | 5 | |

| | | | | |
|--|--|--|------|-------|
| | Մակերևույթի թեքություն | մինչև 10 | 1 | 0.02 |
| | | 10-20 | 2 | |
| | | 20-30 | 3 | |
| | | 30-40 | 4 | |
| | | 45 և ավելի | 5 | |
| | Կողմնադրություն | Հյուսիսային | 1 | 0.025 |
| | | հս-արլ, հս-արմ | 2 | |
| | | արևմտյան, արևելյան | 3 | |
| | | հվ-արլ, հվ-արմ | 4 | |
| | | Հարավային | 5 | |
| Բուսականություն | Բուսականության տիպ | Ֆրիգանոիդ | 1 | 0.05 |
| | | Տափաստանային | 2 | |
| | | Քսերոֆիլ նոսրանտառ, մարգագետնատափաստան | 3 | |
| | | Ցածր ալպյան | 4 | |
| | | Անտառային, ալպյան գորգեր | 5 | |
| | NDVI (բուսածածկի տարբերության նորմալացված գործակից) ըստ տիեզերական լուսանկարների | -1-0 | 1 | 0.06 |
| | | 0-0,2 | 2 | |
| | | 0,2-0,4 | 5 | |
| | | 0,4-0,8 | 4 | |
| | | 0,8 և ավելի | 3 | |
| Բնական հատուկ օբյեկտների առկայությունը և որակը | Ջրային օբյեկտներ | Լճեր | 5 | 0.07 |
| | | Գետեր | 5 | 0.055 |
| | | Ջրվեժ | 5 | 0.055 |
| | | Ձնային բծեր | 5 | 0.04 |
| | Լեռնագրական օբյեկտներ | Լեռնագագաթներ, հրաբխային կոներ | 5 | 0.06 |
| | | Ապարային մերկացումներ | 5 | 0,06 |
| Բնության հատուկ պահպանվող տարածքներ | Արգելոց | 5 | 0,07 | |
| | Արգելավայր | 4 | | |
| | Ազգային պարկ | 3 | | |
| | | Պատմամշակութային և գեղագիտական | 5 | 0.06 |

| | | | | | |
|---|--|---|-------|----|-------|
| Անթրոպոգեն օբյեկտների առկայությունը | Դրական աղդեցություն ունեցող օբյեկտներ | նշանակության ճարտարապետական ընդգծվածության օբյեկտ | | | |
| | | Ջրամբար | | 5 | 0.06 |
| | | Ջրանցք | | 5 | 0.04 |
| | Բացասական աղդեցություն ունեցող օբյեկտներ | Լեռնահանքային արդյունաբերության կետեր | | -5 | 0.055 |
| | | Արդյունաբերական թափոնատար | | -5 | 0.055 |
| | | Ջրաէներգետիկ հանգույց | | -5 | 0.04 |
| | | Բնակավայր | գյուղ | -3 | 0.055 |
| | | | քաղաք | -5 | |
| Ընդհամենը | | | | 1 | |


Համադրումը կատարվել է ArcGIS ծրագրային միջավայրում՝ օգտագործելով Weighted Sum ֆունկցիան: Առաջին հերթին կատարվել է բոլոր տվյալների ֆորմատային նույնացում, վեկտորային ֆորմատից փոխադրում ռաստերային ֆորմատի (feature to raster), որից հետո ատրիբուտային տվյալների վերադասակարգում (reclassification): ԼԳԳԱ-ի ցուցանիշները դասակարգվել են ըստ 6 դասերի, որոնցով էլ կազմվել է Սյունիքի մարզի լանդշաֆտների գեղագիտական գրավչության աստիճանը ցույց տվող քարտեզը (նկ.1):

Առավել գրավիչ և գրավիչ տարածքները համապատասխանաբար զբաղեցնում են Սյունիքի մարզի տարածքի 8,3% և 20,4%-ը, անհրապուրիչ և ավելի շատ անհրապուրիչ, քան գրավիչ տարածքները 0,3% և 4,2%-ը ; Ամենից մեծ տարածում ունի ավելի շատ գրավիչ, քան անհրապուրիչ դասն ընդգրկած տարածքները (38,4%):

Քարտեզի վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել գրավիչ են Սյունիքի կենտրոնական շրջանների լանդշաֆտները՝ Շիկահողի արգելոցի լայնատերև անտառներով պատված ողջ տարածքը, Մեղրի գետի վերին հոսանքի խիտ բուսազանգվածով մարգագետինները, Չանգեգուրի արգելավայրի, Ողջի գետի ավազանի ժայռոտ տարածքներն ու քարափները: Հյուսիսային շրջաններում առավել բարձր գեղագիտական արժեք ունեն հրաբխային կոների և բարձրադիր լճերի հարակից լանդշաֆտները: Առավել գրավիչ են Ողջի և Որոտան գետերի կիրճերը, Տաթևի սարավանդը, Գորիս գետի վերին հոսանքի թեք ու մասնատված գետահովտային լանջերը:

Սյունիքի հյուսիս-արևմուտքում գրավիչ են ջրամբարների ափամերձ հատվածները, Որոտան գետի վերին հոսանքի մարգագետնատափաստանները, Միսիան գետի վերին հոսանքի անտառատափաստանները:

Անհրապուրիչ են մարդու ազդեցությամբ ամբողջովին ձևափոխված լանդշաֆտները, փոքր բուսազանգվածով միօրինակ տափաստանային լանդշաֆտները, և Մեղրու տարածաշրջանի որոշ հատվածներ:



Նկար 1: Սյունիքի մարզի լանդշաֆտների գեղագիտական հատկության օբյեկտիվ գնահատման քարտեզ

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Սյունիքի մարզի տարածքի մեծ մասը գրավում են գեղագիտական բարձր արժեք և ներուժ ունեցող լանդշաֆտները, որոնք պետք է պահպանել, անհրաժեշտության դեպքում էլ՝ օգտագործել որպես ռեկրեացիոն ռեսուրս, հարստացնելով գեղագիտական նշանակություն ունեցող օբյեկտներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Дирин Д., Попов Е., Оценка пейзажно-эстетической привлекательности ландшафтов: методологический обзор, Известия Алтайского государственного университета 2010, № 3, ст. 120-124
2. Мотошина А., Вдовюк Л., Методические приемы оценки эстетических свойств ландшафтов Т Тюменской области в рекреационных целях, Вестник Тюменского государственного университета. 2013, № 4, ст. 58-66
3. Николаев В.А., Ландшафтоведение: Эстетика и дизайн: Учеб. пособие., М.: Аспект Пресс, 2005, 176 с.
4. Эрингис К., Будрюнас А. Сущность и методика детального эколого-эстетического исследования пейзажей // Экология и эстетика ландшафта,-Вильнюс 1975. ст. 107-170.
5. Rene Fourie, Applying GIS in the evaluation of landscape aesthetics, University of Stellenbosch, 2005, p. 70

THE OBJECTIVE ESTIMATION AND MAPPING TO AN AESTHETIC FEATURE FOR THE LANDSCAPES OF SYUNIK REGION

The article is devoted to the analysis of an objective aesthetic estimation for the landscapes of Syunik region. The specific group of factors of an aesthetic estimation of mountain landscapes is presented considering the geographical features of Syunik region and methods of several authors to an objective estimation. By results of research the corresponding map of aesthetic appeal for landscapes of Syunik region

